«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

ԱՄՆ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարություն

# Տեղեկատվության տրման համար հայտատուի/վարձակալի համաձայնության վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ

Սույն փաթեթը պարունակում է հետևյալ փաստաթղթերը.

1.HUD-9887/A փաստաթերթիկ, որում նկարագրված են անհրաժեշտ ստուգումները

2.Ձևաթուղթ HUD-9887 (ստորագրվում է Հայտատուի կամ Վարձակալի կողմից)

3.Ձևաթուղթ HUD-9887-A (ստորագրվում է Հայտատուի կամ Վարձակալի և Բկակարանի սեփականատիրոջ կողմից)

4.Համապատասխան ստուգումներ (ստորագրվում է Հայտատուի կամ Վարձակալի կողմից)

Յուրաքանչյուր տնային տնտեսություն պետք է ստանա 9887/A փաստաթերթիկ, ձևաթուղթ HUD-9887 և ձևաթուղթ HUD-9887-A:

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

HUD-9887/A փաստաթերթիկ

# Օգնություն ստացող բնակարանների հայտատուների և վարձակալների կողմից ներկայացված տեղեկատվության ստուգում

## Ինչ է ներառում ստուգումը

Բնակարանային օգնություն ստանալու համար հայտատուները և վարձակալները, ովքեր առնվազն 18 տարեկան են և յուրաքանչյուր ընտանիքի գլուխ, ամուսին (կին) կամ համագլուխ՝ անկախ տարիքից պետք է տրամադրեն սեփականատիրոջը կամ կառավարման գործակալին (O/A) կամ հանրային բնակարանային գործակալությանը (PHA) որոշակի տեղեկատվություն, որը սահմանված է ԱՄՆ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարության կողմից (HUD):

Օգնությունը պատշաճ օգտագործելու նպատակով դաշնային օրենքներով պահանջվում է, որպեսզի ձեր կողմից ներկայացվող տեղեկատվությունը ստուգվի: Այդ տեղեկատվությունը ստուգվում է երկու ճանապարհով.

1. HUD-ն, O/A–երը և PHA–երը կարող են ստուգել ձեր կողմից ներկայացվող տեղեկատվությունը, ճշտելով որոշ հանրային գործակալություններում (օրինակ, Սոցիալական ապահովության վարչությունը (SSA), նահանգային գործակալությունը, որտեղ պահվում է աշխատավարձի և գործազրկության փոխհատուցման պահանջների հետ կապված տեղեկատվությունը և Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարության (HHS) Նոր վարձումների ազգային տեղեկատուի (NDNH), որտեղ պահվում են աշխատավարձերի և գործազրկության փոխհատուցման վերաբերյալ տվյալների բազաները) հետ:HUD–ն (միայն) կարող է ստուգել ձեր հարկային հայտարարագրերում պարունակվող տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությունից (IRS): Ստորագրելով սույն ձևաթուղթ HUD-9887–ը, դուք տալիս եք ձեր համաձայնությունը նշված տեղեկատվության տրամադրման համար: Սույն ձևաթղթով թույլատրված տեղեկատվությունը կարող են ստանալ միայն HUD–ն, O/A–երը և PHA–երը:

2. O/A-ը պետք է ստուգի այն տեղեկատվությունը, որն օգտագործվում է ձեր իրավասությունը և ձեր կողմից վճարվող գումարը որոշելու համար: Ստորագրելով ձևաթուղթ HUD-9887–ը, ինչպես նաև անհատական ստուգման և համաձայնության ձևաթղթերը, դուք տալիս եք ձեր համաձայնությունը այդ տեղեկատվության տրամադրման համար: Դաշնային օրենքները սահմանափակում են տեղեկատվության տեսակները, որոնք O/A–ը կարող է ստանալ ձեր մասին: Ձեր կողմից ստացվող եկամուտի գումարը օգնում է որոշելու ձեր կողմից վճարվելիք վարձավճարի գումարը: O/A–ը ստուգելու է ձեր կողմից ներկայացվող եկամուտի բոլոր աղբյուրները: Որոշ նպաստներ կրճատում են այն եկամուտը, որն օգտագործվում է վարձավճարը որոշելիս:
   **Օրինակ.** Տկն. Անդերսոնը 62 տարեկան է: Իր տարիքը բավարարում է բժշկական նպաստ ստանալու համար: Իր տարեկան եկամուտը ճշգրտվելու է կապված այս նպաստի հետ: Քանի որ տկն. Անդերսոնի բժշկական ծախսերը օգնելու են իր կողմից վճարվող վարձավճարի գումարը որոշելու հարցում, O/A–ից պահանջվում է ստուգել իր կողմից ներկայացվող բոլոր բժշկական ծախսերը:
   **Օրինակ.** Պրն. Հարիսը չի բավարարում բժշկական նպաստի համար, որովհետև նա առնվազն 62 տարեկան չէ և նա հաշմանդամ կամ անգործունակ չէ: Քանի որ նա իրավասու չէ բժշկական նպաստի համար, ապա իր բժշկական ծախսերի գումարը չի փոփոխում իր կողմից վճարվող վարձավճարի գումարը: Հետևաբար, O/A–ը չի կարող որևէ բան հարցնել պրն. Հարիսին իր բժշկական ծախսերի մասին և չի կարող ստուգել երրորդ կողմի հետ իր կողմից արված որևէ բժշկական ծախս:

## Սպառողների պաշտպանությունները

HUD-ի կողմից ստացված տեղեկատվությունը պաշտպանվում է Մասնավոր կյանքի մասին դաշնային օրենքով: O/A–ի կողմից կամ PHA–ի կողմից ստացված տեղեկատվությունը ենթակա են մասնավոր կյանքի մասին նահանգային օրենքների: HUD–ի, O/A–ի և PHA–ի աշխատողները սույն համաձայնության ձևաթղթերը ոչ պատշաճ օգտագործելու համար ենթարկվում են տույժերի: Դուք չպետք է ստորագրեք ձևաթուղթ HUD-9887–ը, HUD-9887-A–ը կամ անհատական ստուգման համաձայնության ձևաթղթերը, երբ դրանք տրվում են ձեզ ձեր ատեստավորման կամ կրկնակի ատեստավորման հարցազրույցի ժամանակ: Դուք կարող եք դրանք ձեզ հետ տանել տուն՝ կարդալու կամ ձեր ընտրությամբ երրորդ կողմից հետ քննարկելու նպատակով: Այդ ձևաթղթերը ստորագրելու համար O/A–ը կարող է ձեզ նշանակել ուրիշ ամսաթիվ:

Եթե դուք չեք կարողանում կարդալ կամ ստորագրել համաձայնության ձրաթուղթը անգործունակության պատճառով, ապա O/A–ը՝ 1973թ.–ի Վերականգնման մասին օրենքի Բաժին 504–ի համաձայն կատարում է ողջամիտ հարմարեցում: Նման հարմարեցումները կարող են ընդգրկել. տնային այցելությունները, երբ հայտատուի կամ վարձակալի անգործունակությունը խանգարում են ձևաթղթերը ստորագրելու համար իր գրասենյակ գալուն, հայտատուի կամ վարձակալի կողմից իր անունից ստորագրելու նպատակով այլ անձի լիազորելը, իսկ տեսողության թերություններ ունեցողների համար հարմարեցումները կարող են իրենցից ներկայացնել ձևաթղթերը խոշոր տառատեսակով կամ Բռայլի տառատեսակով տրամադրումը կամ ընթերցողների տրամադրումը:

Եթե ձեր տնային տնտեսության մեծահասակ անդամ՝ մեղմացուցիչ հանգամանքների պատճառով ի վիճակի չէ ժամանակին ստորագրել ձևաթուղթ HUD-9887–ը կամ անհատական ստուգման ձևաթղթերը, ապա O/A–ը կարող է ձևակերպել գործը, նշելով հետաձգման պատճառը և հնարավորինս սեղմ ժամկետներում ստորագրությունը ձեռք բերելու պլանները:

O/A–ը պետք է հայտնի ձեզ կամ ձեր ընտրությամբ երրորդ կողմին ձեր կողմից թույլատրված O/A–ի ստուգումների արդյունքում ստացված փաստերի մասին: O/A–ը պետք է ձեզ հնարավորություն տրամադրի վիճարկելու այդ փաստերը համաձայն HUD–ի Ձեռնարկ 4350.3–ի 1–ին խմբ.: Սակայն ձևաթուղթ HUD-9887–ով կամ ձևաթուղթ HUD-9887-A–ով ստացված տեղեկատվության հետ կապված, HUD–ն, O/A–ը կամ PHA–ը կարող է տեղեկացնել ձեզ այդ փաստերի մասին:

O/A–ները պետք է պահեն վարձակալների գործերը գաղտնապահությունը ապահովող տեղերում: O/A–ի ցանկացած աշխատող, ով գաղտնի չի պահում վարձակալի տեղեկատվությունը, ենթակա է Մասնավոր կյանքի մասին օրենքի պատժամիջոցների վերաբերյալ դրույթների և ենթակա է HUD–ի պատժամիջոցների: Միևնույն ժամանակ, ցանկացած հայտատու կամ վարձակալ, որը ենթարկվել է տեղեակտվության անփույթ բացահայտման կամ ոչ պատշաճ օգտագործման, կարող է հանդես գալ վնասների հատուցման մասին քաղաքացիական հայցով և պահանջել գործատուի դեմ այլ համապատասխան միջոցներ:

HUD-9887/A–ը պահանջում է O/A–ից յուրաքանչյուր տնային տնտեսությանը տալ փաստաթերթիկի և ձևաթղթեր HUD-9887–ի, HUD-9887-A–ի օրինակներ՝ անհատական համաձայնության ձևաթղթերի հետ միասին: Ձեր կողմից ստացվելիք փաստերն ընդգկելու է հետևյալ փաստաթղթերը.

1. **HUD-9887/A փաստաթերթիկ.** Նկարագրում է բնակարանային օգնության համար դիմող անհատների կողմից ներկայացվող տեղեկատվությունը ստուգելու պահանջը: Փաստաթերթիկում նաև նկարագրվում է սպառողների պաշտպանությունների ստուգման գործընթացի ներքո:
2. **Ձևաթուղթ HUD-9887.** Թույլ է տալիս տեղեկատվության տրամադրումը կառավարական գործակալությունների միջև:
3. **Ձևաթուղթ HUD-9887-A.** Նկարագրում է երրորդ կողմի ստուգումների պահանջը՝ սպառողի պաշտպանությունների հետ միասին:
4. **Անհատական ստուգումների համաձայնություններ.** Օգտագործվում են հայտատուների/վարձակալների կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվությունը ստուգելու համար՝ իրենց իրավասությունը և նպաստների մակարդակը ստուգելու համար:

## Ձևաթղթերը չստորագրելու հետևանքները

Եթե դուք չեք ստորագրում ձևաթուղթ HUD-9887–ը, ձևաթուղթ HUD-9887-A–ը կամ անհատական ստուգման ձևաթղթերը, ապա դա արդյունքում կարող է հանգեցնել ձեր օգնության մերժման (հայտատուների դեպքում) կամ օգնության դադարեցման (վարձակալների դեպքում): Լրացուցիչ բացատրությունները տես ձևաթղթեր HUD-9887–ում և 9887-A–ում:

Եթե դուք հայտատու եք և ձեր օգնությունը մերժվում է այս պատճառով, ապա O/A–ը պետք է ձեզ ծանուցի ձեր մերժման պատճառի մասին, տալով ձեզ հնարավորություն որոշումը բողոքարկելու համար:

Եթե դուք վարձակալ եք և ձեր օգնությունը դադարեցվում է այս պատճառով, ապա O/A–ը պետք է հետևի Վարձակալության պայմանագրում սահմանված ընթացակարգերին: Սա ընդգրկում է O/A–ի հետ հանդիպելու հնարավորությունը:

## Սույն փաստաթերթիկով ընդգրկված ծրագրերը

Վարձակալության օգնության ծրագիր (RAP)

Վարձավճարի հավելավճարներ

Բաժին 8՝ Բնակարանային օգնության ծրագրեր (վարվում է Բնակարանային տնտեսության վարչության կողմից)

Բաժին 202

Բաժիններ 202 և 811 PRAC

Բաժին 202/162 PAC

Բաժին 221(d)(3) Շուկայականից ցածր տոկոսադրույքներ

Բաժին 236

HOPE 2 Բազմաընտանիք միավորների տան սեփականությունը

O/A–երը յուրաքանչյուր տնային տնտեսությանը պետք է տրամադրի սույն HUD–ի փաստաթերթիկի օրինակը: Տես ցուցումները ձևաթուղթ HUD-9887-A–ում:

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

# Ծանուցում և համաձայնություն տեղեկատվություն տալու համար

ԱՄՆ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարությանը (HUD) և Սեփականատիրոջը և կառավարման գործակալին (O/A), ինչպես նաև Հանրային բնակարանային տնտեսության գործակալությանը (PHA)

**ԱՄՆ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարություն**
Բնակարանային տնտեսության վարչություն
Բնակարանային տնտեսության հարցերով դաշնային հանձնակատար

| | | |
|---|---|---|
| Տեղեկատվության տրամադրում պահանջող HUD–ի վարչություն (Սեփականատերը պետք է տրամադրի HUD–ի դաշտային վարչության լրիվ հասցեն, Հասցեատեր՝ Բազմաընտանիք բաժնի տնօրեն:). | Տեղեկատվության տրամադրում պահանջող O/A (Սեփականատերը պետք է տրամադրի Սեփականատիրոջ լրիվ անունը, ազգանունը և հասցեն:). | Տեղեկատվության տրամադրում պահանջող PHA (Սեփականատերը պետք է տրամադրի PHA–ի լրիվ անվանումը և հասցեն, ինչպես նաև տնօրենի կամ կառավարչի պաշտոնը: PHA–ի սեփականատիրող կամ այս ծրագրով PHA–ի պայմանագրային կառավարչի բացակայության դեպքում, դրե՛ք X ամբողջ վանդակում:). |

**Ծանուցում Վարձակալին. Մի՛ ստորագրեք սույն ձևաթուղթը, եթե տեղեկատվության տրամադրում պահանջող կազմակերպությունների համար նախատեսված վերևի տեղերը թողնվել են դատարկ: Դուք չպետք է ստորագրեք սույն ձևը՝ այն ձեզ տալու պահին: Դուք կարող եք տանել ձևաթուղթը տուն և կարդալ կամ քննարկել այն ձեր ընտրությամբ երրորդ կողմի հետ և վերադառնալ համաձայնությունը ստորագրելու համար՝ սեփականատիրոջ /կառավարչի հետ պայմանավորված օրը:**

**Լիազորություն.** Միավորված հատկացումների մասին 2004թ.–ի օրենքի (Pub L. 108-199) Բաժին 217: Սույն օրենքը գտնվում է 42 U.S.C.653(J)–ում: Սույն օրենքը լիազորում է HHS–ին բացահայտելու Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարությունը (HUD) «Հաշվառումների գտնվելու վայրը և հավաքագրման համակարգ»–ի NDNH–ի մասնաբաժնի տեղեկատվությունը՝ վերապահված ծրագրերում մասնակցող անհատների գբաղվածությունը և եկամուտը ստուգելու նպատակով՝ անհատական անձը հաստատող որոշիչները հեռացնելուց հետո՝ այդ անհատների կողմից իրենց գբաղվածության և եկամուտի մասին տեղեկատվությունը ներկայացնելու վերլուծությունը կատարելու համար: Տեղեկատվությունը կարող է բացահայտվել HUD–ի նախարարի կողմից մասնավոր սեփականատիրոջը, կառավարման գործակալին և պայմանագրի կառավարչին՝ վարձակալած բնակարանային օգնության վարչարարության ընթացքում:

Բաժին 904 Անտուններին օգնության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին 1988թ.–ի Ստյուարտ Բ. Մակքինիյի օրենք Բաժին 904–ը փոփոխված Բնակարանային տնտեսության և համայնքային զարգացման մասին 1992թ.–ի օրենքի բաժին 903–ով և Բազմահոդված բյուջեների համաձայնեցման մասին 1993թ.–ի օրենքի բաժին 3003–ով: Սույն օրենքը գտնվում է 42 U.S.C. 3544–ում: Սույն օրենքով ձեզանից պահանջվում է ստորագրել համաձայնության ձևաթուղթ, լիազորելով. (1) HUD–ին և PHA–ին՝ պահանջելու աշխատավարձի և գործազրկության փոխհատուցման մասին տեղեկատվությունը այդ տեղեկատվությունը պահելու համար պատասխանատու գործակալությունից և (2) HUD–ն, O/A–ին և PHA–ին, որոնք պատասխանատու են աշխատավարձը և հայտատուի և մասնակցի իրավասությունը կամ նպաստների մակարդակների հետ կապված աշխատավարձի մասին տեղեկատվությունը ստուգելու համար իրավասությունը որոշելու համար. (3) HUD–ն՝ ԱՄՆ Սոցիալական ապահովության վարչությունից (SSA) և ԱՄՆ Հարկային վարչությունից (IRS) հարկային հայտարարագրերից որոշակի տեղեկատվություն պահանջելու համար:

**Նպատակը.** Ստորագրելով սույն համաձայնության ձևաթուղթը, դուք լիազորում եք HUD–ին, վերոհիշյալ O/A–ին և PHA–ին՝ ձևաթղթում նշված կառավարական գործակալություններից եկամուտի մասին տեղեկատվություն պահանջելու հարցում: HUD–ին, O/A–ին և PHA–ին այդ տեղեկատվությունը պահանջվում է, որպեսզի ստուգվի ձեր տնային տնտեսության եկամուտը՝ երաշխավորելու, որ դուք իրավասու եք օգնություն ստացող բնակարանավարձի նպաստների համար և որ այդ նպաստները սահմանված են ճիշտ մակարդակով: HUD–ն, O/A–ը և PHA–ը այդ աղբյուրների հետ կարող են մասնակցել համակարգչային համապատասխանության ծրագրերում ստուգելու ձեր իրավասությունը և նպաստների մակարդակները: Սույն ձևաթղթով լիազորվում է նաև HUD–ն, O/A–ը և PHA–ը՝ աշխատավարձի, նոր վարձույթների (W-4) և գործազրկության հետ կապված հայտերի մասին տեղեկատվությունը գործող կամ նախկին գործատուներից՝ համակարգչային համապատասխանության միջոցով ստացված տեղեկատվությունը ստուգելու նպատակով:

**Ստացվելիք տեղեկատվության օգտագործումները.** HUD–ից պահանջվում է պաշտպանել եկամուտի մասին տեղեկատվությունը համաձայն Մասնավոր կյանքի մասին 1974թ.–ի օրենքի 5 U.S.C. 552a–ի: O/A–ից և PHA–ից նույնպես պահանջվում է պաշտպանել եկամուտի մասին տեղեկատվությունը, որն այն ստանում է համաձայն մասնավոր կյանքի մասին նահանգային բոլոր օրենքների:

Սույն համաձայնության ձևաթղթի հիման վրա ստացված եկամուտի մասին տեղեկատվության չարտոնագրված բացահայտումների կամ ոչ պատշաճ օգտագործումների համար HUD–ի, O/A–ի և PHA–ի աշխատողները կարող են ենթարկվել տույժերի:

**Ով պետք է ստորագրի համաձայնության ձևաթուղթը.** Ձեր տնային տնտեսության յուրաքանչյուր անդամ՝ ով առնվազն 18 տարեկան է և յուրաքանչյուր ընտանիքի գլուխ, ամուսին (կին) կամ համագլուխ՝ անկախ տարիքից, պետք է ստորագրի համաձայնության ձևաթուղթը սկզբնական ատեստավորմանը և յուրաքանչյուր կրկնակի ատեստավորմանը: Նոր մեծահասակ անդամներից, երբ նրանք միանում են տնային տնտեսությանը կամ երբ տնային տնտեսության անդամները դառնում են 18 տարեկան, պետք է ստացվեն լրացուցիչ ստորագրություններ:

Հեկյալ ծրագրերի համար դիմող կամ դրանցից օգնություն ստացող անձանցից պահանջվում է ստորագրել սույն համաձայնության ձևաթուղթը.

Վարձակալության օգնության ծրագիր (RAP)

վարձավճարի հավելավճար

Բաժին 8՝ Բնակարանային օգնության վճարների ծրագիր (կառավարվում է Բնակարանային տնտեսության վարչության կողմից)

Բաժին 202; Բաժիններ 202 և 811 PRAC; Բաժին 202/162 PAC Բաժին 221(d)(3)՝ Շուկայականից ցածր տոկոսադրույքներ

Բաժին 236

HOPE 2՝ Բազմաընտանիք միավորների տնային սեփականություն

**Համաձայնության ձևաթղթեր չստորագրելը.** Ձեր կողմից համաձայնության ձևաթուղթ չստորագրելը հանգեցնում է օգնության մերժման կամ օժանդակվող բնակարանային նպաստների դադարեցմանը: Եթե հայտատուին մերժվում է օգնության հարցում այս պատճառով, ապա սեփականատերը պետք է հետևի Ձերնարկ 4350.3 Խմբ. 1–ի ծանուցման ընթացակարգերին: Եթե վարձակալը մերժվում է օգնության հարցում այս պատճառով, ապա սեփականատերը կամ կառավարող գործակալը պետք է հետևեն վարձակալությամբ սահմանված ընթացակարգերին:

**Համաձայնություն. Ես համաձայնում եմ թույլատրել HUD–ին, O/A–ին կամ PHA–ին սույն ձևաթղթի ետևում նշված դաշնային և նահանգային գործակալություններից պահանջել և ստանալ եկամուտի մասին տեղեկատվություն՝ HUD–ի օժանդակվող բնակարանային ծրագրերով իմ իրավասությունը և նպաստների մակարդակը ստուգելու նպատակով:**

**«Ստորագրման ենթակա է վարձակալության պայմանագրի միայն անգլերեն տարբերակը»:**

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

## Տեղեկատվություն տրամադրող գործակալությունները

Աշխատավարձի մասին տեղեկատվություն հավաքագրող նահանգային գործակալությունները (HUD–ն և PHA–ը): Սույն համաձայնությունը սահմանափակվում է աշխատավարձերով և գործազրկության փոխհատուցմամբ, որը դուք ստացել եք վերջին 5 տարվա ընթացքում օժանդակվող բնակարանային նպաստներ ստացած ժամանակամիջոցների ընթացքում:

ԱՄՆ Սոցիալական ապահովության վարչությունը (միայն HUD–ն): Սույն համաձայնությունը սահմանափակվում է ձեր գործող ձևաթուղթ W-2–ից աշխատավարձի և ինքնազբաղության մասին տեղեկատվությամբ:

Առողջապահության և մարդկային ծառայությունների հաշվառումների համակարգում պարունակվող Նոր վարձույթների ազգային տեղեկատուն: Սույն համաձայնությունը սահմանափակվում է աշխատավարձերով և գործազրկության փոխհատուցմամբ, որը դուք ստացել եք վերջին 5 տարվա ընթացքում օժանդակվող բնակարանային նպաստներ ստացած ժամանակամիջոցների ընթացքում:

ԱՄՆ Հարկային ծառայությունը (միայն HUD–ն):Սույն համաձայնությունը սահմանափակվում է ձեր հարկային հայտարարագրում պարունակվող տեղեկատվությամբ:

Սույն համաձայնությունը սահմանափակվում է հետևյալ տեղեկատվությամբ, որը կարող է հայտվել ձեր ընթացիկ հարկային հայտարարագրում.

1099-S Քաղվածք անշարժ գույքի գործարքներից առաջացող հասույթ ստացողների համար

1099-B Քաղվածք անշարժ գույքի բրոքերների և ապրանքափոխանակության գործարքներից հասույթ ստացողների համար

1099-A Տեղեկություններ երաշխավորված գույքի ձեռքբերման կամ օտարման մասին

1099-G Քաղվածք որոշակի կառավարական վճարումներ ստացողների համար

1099-DIV Քաղվածք շահաբաժիններ և տեղաբաշխումներ ստացողների համար

1099 INT Քաղածք տոկոսադրույքի տեսքով եկամուտ ստացողների համար

1099-MISC Քաղվածք չնախատեսված եկամուտ ստացողների համար

1099-OID Քաղվածք սկզբնական զեղչ ստացողների համար

1099-PATR Քաղվածք կոոպերատիվներից ստացվող հարկվող տեղաբաշխումներ ստացողների համար

1099-R Քաղվածք կենսաթոշակային պլան W2-G–ի ստացողների համար

Քաղվածք մոլեխաղի շահումներից

1065-K1 Եկամուտի գործընկերների մասնաբաժինը, վարկեր, մասհանումներ և այլն

1041-K1 Եկամուտի շահառուների մասնաբաժինը, վարկեր, մասհանումներ և այլն

1120S-K1 Չբաշխված հարկվող եկամուտի բաժնետիրող մասնաբաժինը, վարկեր, մասհանումներ և այլն

Ես հասկանում եմ, որ այդ աղբյուրներից հավաքագրվող եկամուտի վերաբերյալ տեղեկատվությունը օգտագործվելու է իմ կողմից ներկայացվող տեղեկատվությունը ստուգելու համար, որպեսզի որոշվի սկզբնական կամ շարունակելի իրավասությունը բնակարանային օժանդակվող և նպաստների մակարդակները:

Սույն համաձայնությամբ ձեր մասին ստացված տեղեկատվության հիման վրա չի կարող ձեռնարկվել որևէ գործողություն կապված ձեր տնային տնտեսության կողմից ստացվող օգնությունը դադարեցնելու, մերժելու, կասեցնելու կամ կրճատելու հետ՝ առանց HUD–ի գրասենյակի, Գլխավոր տեսուչի գրասենյակի (OIG) կամ PHA–ի (որը կիրառելի է) և O/A–ի կողմից անկախ ստուգելու. 1) առնչվող եկամուտի, աշխատավարձերի կամ գործազրկության փոխհատուցման գումարը, 2) արդյոք դուք իսկապես ունեք (կամ ունեցել եք) հասանելիություն այդ եկամուտի, աշխատավարձերի կամ նպաստների նկատմամբ ձեր սեփական օգտագործման համար և 3) այն ժամանակամիջոցը կամ ժամանակամիջոցները, երբ կամ որոնց համար դուք փաստացի ստացել եք այդ եկամուտը, աշխատավարձերը կամ նպաստները: Ստորագրված համաձայնության լուսապատճենը կարող է օգտագործվել սույն համաձայնությամբ (օրինակ, գործատուն) ստացված տեղեկատվությունը ստուգելու խնդրանքով երրորդ կողմին դիմելու խնդրանքով:

HUD–ն, O/A–ը կամ PHA–ը տեղեկացնելու է ձեզ կամ ձեր կողմից նշանակված երրորդ կողմին սույն համաձայնությամբ ստուգված տեղեկատվության հիման վրա ստացված փաստերը, տալով ձեզ հնարավորություն վիճարկելու այդ փաստերը համաձայն Ձեռնարկ 4350.3 Խմբ. 1–ի:

Եթե տնային տնտեսության անդամը, ումից պահանջվում է ստորագրել համաձայնության ձևաթուղթը, ի վիճակի չէ ժամակին ստորագրել ձևաթուղթը մեղմացուցիչ հանգամանքներով, ապա O/A–ը կարող է ձևակերպել գործը, նշելով հետաձգման պատճառը և համապատասխան ստորագրություն հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռք բերելու որոշակի պլանները:

Սույն համաձայնության ձևաթղթի ժամկետը լրանում է այն ստորագրելուց 15 ամիս հետո

---

**Քաղվածք մասնավոր կյանքի մասին օրենքից:** Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարությունը (HUD) լիազորված է հավաքագրել սույն տեղեկատվությունը ըստ ԱՄՆ Բնակարանային տնտեսության մասին 1937թ.–ի օրենքի՝ փոփոխված (42 U.S.C. 1437 և մյուսները); Բնակարանային տնտեսության և գյուղական–քաղաքային վերականգնման մասին 1983թ.–ի օրենքի (P.L. 98-181); Բնակարանային տնտեսության և համայնքային զարգացման 1984թ.–ի տեխնիկական փոփոխությունների (P.L. 98-479); Բնակարանային տնտեսության և համայնքային զարգացման մասին 1987թ.–ի օրենքի (42 U.S.C. 3543): Տեղեկատվությունը հավաքագրվում է HUD–ի կողմից՝ որոշելու հայտատուի իրավասությունը, միավորի առաջարկվող չափերը, ինչպես նաև այն գումարը, որը վարձակալ(ներ)ը պետք է վճարի/վճարեն վարձավճարի և կոմունալ վճարների տեսքով: Օգտագործելով այդ տեղեկատվությունը, HUD–ն օգնում է կառավարել HUD–ի որոշ գույքերը, պաշտպանել Կառավարության ֆինանսական շահը և ստուգել տրամադրված տեղեկատվության ճշտությունը: Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը ստուգելու նպատակով HUD–ն, սեփականատերը կամ կառավարող գործակալը (O/A) կամ հանրային բնակարանային տնտեսության գործակալությունը (PHA) կարող են անցկացնել համակարգչային համապատասխանություն: Այդ տեղեկատվությունը կարող է ըստ համապատասխանության տրվել դաշնային, նահանգային և տեղական գործակալություններին, ինչպես նաև քաղաքացիական, քրեական կամ կանոնակարգող քննիչներին կամ դատաղազներին: Այնուամենայնիվ, տեղեկատվությունը չի տրվելու HUD–ից դուրս այլ եղանակով, բացի օրենքով թույլատրվող կամ պահանջվող դեպքերի: Դուք պետք է ներկայացնեք պահանջված ամբողջ տեղեկատվությունը: Որևէ տեղեկատվություն չտրամադրելը կարող է հանգեցնել ձեր իրավասության հաստատման հետաձգման կամ մերժման:

---

**Տուգանքներ սույն համաձայնությունը սխալ օգտագործելու համար.**

HUD–ն, O/A–ը և որևէ PHA (կամ HUD–ի, O/A–ի կամ PHA–ի աշխատող) կարող է ենթարկվել տուգանքների՝ սույն համաձայնության ձևաթղթի հիման վրա ստացված տեղեկատվությունը առանց թույլտվության բացահայտելուկամ ոչ պատշաճ օգտագործելու համար:

Ձևաթուղթ HUD 9887–ի հիման հավաքագրված տեղեկատվության օգտագործումը սահմանափակվում է ձևաթուղթ HUD 9887–ում նշված նպատակներով: Ցանկացած անձ, ով կեղծիքով գիտակցաբար կամ կամովին խնդրում, ձեռք է բերում կամ բացահայտում է հայտատուի կամ վարձակալի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, կարող է որակվել որպես իրավախախտում և ենթարկվել տուգանքի ոչ ավելի քան $5,000–ի:

Որևէ հայտատու կամ վարձակալ, ով ենթարկվում է տեղեկատվության անփույթ բացահայտման, վնասների համար կարող է հանդես գալ քաղաքացիական հայցով և հայցել այլ համապատասխան պաշտպանություն ընդդեմ HUD–ի, Սեփականատիրոջ կամ PHA–ի պատասխանատուի՝ չթույլատրված բացահայտման կամ ոչ պատշաճ օգտագործման համար:

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

# Հայտատուի/վարձակալի համաձայնությունը տեղեկատվություն տալու մասին

## Բնակարանային օգնության համար դիմող անհատների կողմից ներկայացված տեղեկատվության ստուգում

**ԱՄՆ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարություն**
Բնակարանային տնտեսության գրասենյակ
Բնակարանային տնտեսության հարցերով դաշնային հանձնակատար

### Հրահանգներ սեփականատերերին

1. Տվե՛ք ստորև նշված փաստաթղթերը հայտատուի/վարձակալի ստորագրությանը: Կարե՛ք կամ կցե՛ք դրանք մեկ փաթեթով նշված հերթականությամբ:
   a. HUD-9887/A փաստաթերթիկ:
   b. Ձևաթուղթ HUD-9887:
   c. Ձևաթուղթ HUD-9887-A:
   d . Համապատասխան ստուգումներ (HUD–ի Ձեռնարկ 4350.3 Խմբ. 1):

2. Բանավոր տեղեկացրե՛ք հայտատուներին կամ վարձակալներին, որ
   a. Նրանք կարող են տանել այդ ձևաթղթերը իրենց հետ տուն՝ կարդալու կամ իրենց ընտրությամբ երրորդ կողմի հետ քննարկելու համար և վերադառնալու և ձեզ հետ պայմանավորված ամսաթվին դրանք ստորագրելու համար և
   b. Եթե նրանք ունեն անգործունակություն, որն իրենց խանգարում է կարդալ և/ ստորագրել որևէ համաձայնություն, ապա դուք՝ Սեփականատերդ պետք է ապահովեք ողջամիտ հարմարեցումներ:

3. Սեփականատերերից պահանջվում է յուրաքանչյուր տնային տնտեսությանը տալ HUD9887/A փաստաթերթիկի, ձևաթուղթ HUD-9887–ի և ձևաթուղթ HUD-9887-A–ի օրինակներ՝ հայտուների/վարձակալների պահանջվող ստորագրություն(ներ)ը ստանալուց հետո: Սեփականատերերը պետք է տան հայտատուներին/վարձակալներին իրենց խնդրանքով ստորագրված ստուգման անհատական ձևաթղթերը:

### Հրահանգներ դիմումատուներին և վարձակալներին

Սույն Ձևաթուղթ HUD-9887-A–ը պարունակում է տեղեկատվություն և պաշտպանություններ կապված HUD-ի կողմից պահանջվող ստուգումները, որոնք պետք է իրականացվեն Սեփականատերերի կողմից.

1. Կարդալ սույն նյութը, որտեղ բացատրվում է.
   - HUD–ի պահանջները կապված տեղեկատվության տրման հետ և
   - Սպառողների այլ պաշտպանություններ:
2. Ստորագրել վերջին էջի վրա, որ.
   - կարդացել եք սույ ձևաթուղթը
   - Սեփականատերը կամ ձեր ընտրությամբ երրորդ կողմը բացատրել է այն ձեզ և
   - դուք համաձայն եք տեղեկատվության տրմանը նկարագրված նպատակների և օգտագործումների համար:

### Լիազորություն տեղեկատվության տրման համար հայտատուի/վարձակալի համաձայնության համար

Անտուններին օգնության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին 1988թ.–ի Ստյուարտ Բ. Մակքինիյի օրենք Բաժին 903–ը՝ փոփոխված Բնակարանային տնտեսության և համայնքային զարգացման մասին 1992թ.–ի օրենք:

Մասամբ սույն օրենքը ձեզանից պահանջում է ստորագրել համաձայնության ձևաթուղթը, լիազորելով Սեփականտիրոջը պահանջելու առկա կամ նախկին գործատուներից ստուգել աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվությունը, որը վերաբերում է ձեր իրավասությանը կամ նպաստների մակարդակներին: Դրանից բացի, HUD–ի կանոնակարգերը (24 CFR 5.659՝ Ընտանիքի մասին տեղեկատվություն և ստուգում) որպես բնակարանային օգնության ստացման պայման պահանջում են, որ դուք պետք է ստորագրեք HUD–ի կողմից հաստատված բացթողումը և համաձայնությունը, որը լիազորում է պահառուին կամ եկամուտի մասնավոր աղբյուրին տրամադրել այդ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ձեր իրավասությունը կամ նպաստների մակարդակները որոշելու հարցում: Տեղեկատվությունն ընդգրկում է եկամուտ և ակտիվներ, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության նպաստները և խնայողական հաշիվներից ստացվող տոկոսադրույքը: Դրանք նաև ընդգրկում են ձեր եկամուտի ճշգրտումները, ինչպիսիք են նպաստները խնամքի տակ գտնվողների համար և այն տնային տնտեսությունների համար, որոնց գլուխները կամ ամուսինները (կանայք) տարեց հաշմանդամներ են կամ անգործունակներ, ինչպես նաև նպաստները երեխայի խնամքի հետ կապված ծախսերի, բժշկական ծախսերի և հաշմանդամների օգնության ծախսերի համար:

### Տեղեկատվության տրման համաձայնություն ստանալու նպատակը

Ստորագրելով սույն համաձայնության ձևաթուղթը, դուք լիազորում եք բնակարանային նախագծի Սեփականատիրոջը, որին դուք դիմում եք օգնություն ստանալու խնդրանքով՝ երրորդ կողմից ձեր մասին տեղեկատվություն պահանջելու հարցում: HUD–ն պահանջվում է, որպեսզի բնակարանային սեփականատերը ստուգի ձեր կողմից ներկայացվող տեղեկատվությունը, որն ազդում է ձեր իրավասության և նպաստների մակարդակի վրա՝ բնակարանային նպաստների համար ձեր իրավասությունը և այդ նպաստները ճիշտ մակարդակի վրա սահմանումը երաշխավորելու նպատակով: HUD–ի գրասենյակի կամ PHA–ի (որպես Պայմանագրի կառավարիչ) պահանջով, բնակարանային Սեփականատերը կարող է ապահովել HUD–ին կամ PHA–ին ձեր կողմից տրամադրված տեղեկատվությամբ և սույն համաձայնությամբ Սեփականատիրոջ կողմից ստացվող տեղեկատվությամբ:

### Ստացվելիք տեղեկատվության օգտագործումները

Ստուգման ձևաթղթում նշված անձինք կարող են պահանջել և ստանալ ստուգմամբ պահանջվող տեղեկատվությունը՝ սույն ձևաթղթի սահմանափակումների շրջանակում: HUD–ից պահանջվում է պաշտպանել եկամուտի մասին տեղեկատվությունը համաձայն Մասնավոր կյանքի մասին 1974թ.–ի օրենքի 5 U.S.C. 552a–ի: Սեփականատիրոջից և PHA–ից նույնպես պահանջվում է պաշտպանել եկամուտի մասին տեղեկատվությունը, որը նրանք ստանում են համաձայն մասնավոր կյանքի մասին նահանգային բոլոր օրենքների: Եթե Սեփականատերը տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմից, որը չի համապատասխանում ձեր կողմից ներկայացվող տեղեկատվությանը, ապա Սեփականատերը պետք է գրավոր տեղեկացնի ձեզ, մատնանշելով ստացված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու ենթադրության վրա:

### Ով պետք է ստորագրի համաձայնության ձևաթուղթը

Ձեր տնային տնտեսության յուրաքանչյուր անդամ՝ ով առնվազն 18 տարեկան է և յուրաքանչյուր ընտանիքի գլուխ, ամուսին (կին) կամ համագլուխ՝ անկախ տարիքից, պետք է ստորագրի համաձայնության ձևաթուղթը սկզբնական ատեստավորմանը և յուրաքանչյուր կրկնակի ատեստավորմանը (եթե կիրառելի է): Դրանից բացի, երբ նոր մեծահասակ անդամներ միանում են տնային տնտեսությանը կամ երբ տնային տնտեսության անդամները դառնում են 18 տարեկան, ապա նրանք նույնպես պետք է ստորագրեն համապատասխան համաձայնության ձևաթղթերը:

Հետևյալ ծրագրերի համար դիմող կամ դրանցից օգնություն ստացող անձանցից պահանջվում է ստորագրել սույն համաձայնության ձևաթուղթը.

Վարձակալության օգնության ծրագիր (RAP)

Վարձավճարի հավելավճար

Բաժին 8՝ Բնակարանային օգնության վճարների ծրագիր (կառավարվում է Բնակարանային տնտեսության վարչության կողմից)

Բաժին 202

Բաժիններ 202 և 811 PRAC

Բաժին 202/162 PAC

Բաժին 221(d)(3)՝ Շուկայականից ցածր տոկոսադրույքներ

Բաժին 236

HOPE 2՝ Բազմաընտանիք միավորների տնային սեփականություն

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

## Համաձայնության ձևաթղթեր չստորագրելը

Ձեր կողմից համաձայնության ձևաթուղթ չստորագրելը հանգեցնում է օգնության մերժմանը կամ օժանդակվող բնակարանային նպաստների դադարեցմանը: Եթե հայտատուին մերժվում է օգնության հարցում այս պատճառով, ապա սեփականատերը պետք է հետևի Ձերնարկ 4350.3 Խմբ. 1–ի ծանուցման ընթացակարգերին: Եթե վարձակալը մերժվում է օգնության հարցում այս պատճառով, ապա O/A–ը պետք է հետևի սուն վարձակալության պայմանագրում սահմանված ընթացակարգերին:

## Պայմաններ

Սույն համաձայնությամբ ձեր մասին ստացված տեղեկատվության հիման վրա չի կարող ձեռնարկվել որևէ գործողություն կապված ձեր տնային տնտեսության կողմից ստացվող օգնությունը դադարեցնելու, մերժելու, կասեցնելու կամ կրճատելու հետ՝ առանց O/A–ի կողմից անկախ ստուգելու. 1) ձեր իրավասության և նպաստների մակարդակի վերաբերյալ ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը և 2) եկամուտի առնչությամբ (ներառյալ վաստակած և չվաստակած եկամուտը) O/A–ի կողմից ստուգելու, թե արդյոք դուք իսկապես ունեք (կամ ունեցել եք) հասանելիություն այդ եկամուտի, աշխատավարձերի կամ նպաստների նկատմամբ ձեր սեփական օգտագործման համար և ստուգելու այն ժամանակամիջոցը կամ ժամանակամիջոցները, երբ կամ որոնց համար դուք փաստացի ստացել եք այդ եկամուտը, աշխատավարձերը կամ նպաստները:

Ստորագրված համաձայնության լուսապատճենը կարող է օգտագործվել անհատական համաձայնության ձևաթղթերում ձեր ստորագրությամբ լիազորված տեղեկատվությունը պահանջելու համար: Դա տեղի կունենա, եթե O/A–ը չունենա բնագիր ստորագրությամբ անհատական ստուգման այլ համաձայնություն և O/A–ից պահանջվի ուղարկել այլ պահանջ ստուգման համար (օրինակ, երրորդ կողմը չի պատասխանում): Եթե դա տեղի է ունենում, ապա սույն համաձայնության լուսապատճենը O/A–ը կարող է կցել ձեր կողմից ստորագրվող անհատական ստուգման ձևաթղթի լուսապատճենին: Լուսապատճենների օգտագործումից խուսափելու նպատակով O/A–ը և անհատը կարող են համաձայնել պահանջվող յուրաքանչյուր ստուգման համար ստորագրել մեկից ավելի համաձայնություն: O/A–ը տեղեկացնելու է ձեզ կամ ձեր կողմից նշանակված երրորդ կողմին սույն համաձայնությամբ ստուգված տեղեկատվության հիման վրա ստացված փաստերը, տալով ձեզ հնարավորություն վիճարկելու այդ փաստերը համաձայն Ձեռնարկ 4350.3 Խմբ. 1–ի:

Համաձայն մասնավոր կյանքի մասին նահանգային օրենքների O/A–ը պետք է ձեզ ապահովի սույն համաձայնությամբ ստացված տեղեկատվությունը:

Եթե տնային տնտեսության անդամը, ումից պահանջվում է ստորագրել համաձայնության ձևաթղթերը, ի վիճակի չէ ժամանակին ստորագրել ձևաթուղթը մեղմացուցիչ հանգամանքներով, ապա O/A–ը կարող է ձևակերպել գործը, նշելով հետաձգման պատճառը և համապատասխան ստորագրություն հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռք բերելու որոշակի պլանները:

Տեղեկատվության տրման համաձայնությունների ժամկետները լրանում են դրանք ստորագրելուց 15 ամիս հետո: O/A–ը կարող է օգտագործել այդ համաձայնության ձևաթղթերը ատեստավորման ժամանակամիջոցին նախորդող 120 օրվա ընթացքում: O/A–ը կարող է նաև օգտագործել այդ ձևաթղթերը ատեստավորման ժամանակամիջոցի ընթացքում, բայց միայն այն դեպքերում, երբ O/A–ը ստանում է տեղեկատվություն, որը մատնանշում է, որ ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը ճիշտ չէ: Այլ օգտագործումները արգելված են:

O/A–ը չի կարող անել հարցումներ, որոնք ունեն 12 ամսից ավելի ժամկետ, եթե նա չի ստացել ոչ ճշգրիտ տեղեկատվություն և ունի պատճառ հավատալու, որ ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը ճիշտ չէ: Եթե դա տեղի է ունենում, ապա O/A–ը կարող է ձեռք բերել տեղեկատվություն վերջին 5 տարվա համար, երբ դուք ստացել եք օգնություն:

**Ես կարդացի և հասկացա սույն տեղեկատվությունը սուտգման ենթակա տեղեկատվության նպատակների և օգտագործումների վերաբերյալ և համաձայնում եմ այդ նպատակներով և օգտագործումներով տեղեկատվության տրամադրմանը:**

**Ես կարդացի և հասկացա սույն համաձայնության նպատակները և դրա օգտագործումները և ես հասկանում եմ, որ համաձայնության սխալ օգտագործումը կարող է հանգեցնել իր նկատմամբ տույժերի կիրառմանը:**

**«Ստորագրման ենթակա է վարձակալության պայմանագրի միայն անգլերեն տարբերակը»:**

## Տուգանքներ սույն համաձայնությունը սխալ օգտագործելու համար.

HUD–ն, O/A–ը և որևէ PHA (կամ HUD–ի, O/A–ի կամ PHA–ի աշխատող) կարող է ենթարկվել տուգանքների՝ սույն համաձայնության ձևաթղթի հիման վրա ստացված տեղեկատվությունը առանց թույլտվության բացահայտելու կամ ոչ պատշաճ օգտագործելու համար:

Ձևաթուղթ HUD 9887–ի հիման վրա հավաքագրված տեղեկատվության օգտագործումը սահմանափակվում է ձևաթուղթ HUD 9887–ում նշված նպատակներով: Ցանկացած անձ, ով կեղծիքով գիտակցաբար կամ կամովին խնդրում է, ձեռք է բերում կամ բացահայտում է հայտատուի կամ վարձակալի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, կարող է որակվել որպես իրավախախտ և ենթարկվել տուգանքի ոչ ավելի քան $5,000–ի:

Որևէ հայտատու կամ վարձակալ, ով ենթարկվում է տեղեկատվության անփույթ բացահայտման, վնասների համար կարող է հանդես գալ քաղաքացիական հայցով և հայցել այլ համապատասխան պաշտպանություն ընդդեմ HUD–ի, Սեփականատիրոջ կամ PHA–ի պատասխանատուի՝ չթույլատրված բացահայտման կամ ոչ պատշաճ օգտագործման համար: